Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենտրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԲԱՑՈՒԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՈՒԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ԳԻՆԸ Է ՎՃԱՐԵԼ 6 ռ.

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շուշեցիք և իրենց հասարակական և ազգային հիմնարկութիւնները։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Վաղարշապատից։ Նորին Բարձրութեանց պսակադրութիւնը։ Երևանից։ Սիբիրի երկաթուղու համար ինժեներներ։ Նաւթային արդիւնաբերութեան նոր միութիւնը։ Երկսեռ աշակերտների թիւը Ռուսաստանում։ Մեծ-Շէն գիւղից։ Վլադիկավկազից։ Գիրք գիւղից։ Յանդուգն կողոպտման փորձ։ Ընդհարումն երկաթուղու շոգեկառքերի։ Նամակ Խմբագրութեան։ Դորպատի համալսարանում յունադաւան եկեղեցի։ Պրօֆ Անդրէաս Արծրունի։ Էժանացրած նոր տարին։ Նամակ Ախալցխայից։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՇԵՑԻՔ ԵՒ ԻՐԵՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շուշի չէ մտել մի թեմական առաջնորդ, որ այնտեղից չհեռանայ անպատուած. Շուշիի թեմական դպրոցում չէ եղել մի տեսուչ, մի ուսուցչական խումբ, որ կամ նախատինքով չարտաքսուի, կամ զզուած չթողնէ դպրանոցը։ Էջմիածնի սինօդի արխիւը լի է գանգատներով Սարգիս եպիսկոպոս Ջալալեանի, Արիստակէս վարդապետ (այժմ եպիսկոպոս) Սեդրակեանի, Անդրէաս եպիսկոպոսի և այլոց վրայ. իսկ այժմեան թեմական առաջնորդ սրբազան Կարապետ եպիսկոպոսի վրայ փոստատունը ամենայն օր գանգատներ է փոխադրում։ Շուշին հալածեց Ղանշեանին, Ներսիսեանին, Պռօշեանին, Մանդինեանին։ Շուշին հալածել է միշտ ոչ միայն դրսից եկած հայ հիւրերին, այլ և հալածել է իր հարազատ որդիներին, այն բոլոր շուշեցիներին, որոնք Շուշուայ մթնոլորտից մի քիչ բարձր են եղել և որոնք ձգտել են իրենց հայրենի քաղաքը մասնակից անել ընդհանուր քաղաքակրթուած աշխարհին։ Մի տարօրինակ, արտաքոյ կարգի երեւոյթ է այդ քաղաքը հայկական ընտանիքի մէջ։ Շուշին ահագին թըւով համալսարանական երիտասարդներ ունի և ամենքը փախչում են իրենց հայրենիքից։ Շուշին տուել է հայ գրականութեան բաւական թըւով գրագէտներ, թարգմանիչներ, հրապարակախօսներ և դրանք ամենքը հալածականներ են, տարագրուածներ հայրենիքից։ Շուշեցին հալածել է իր համար առաջին դպրոց շինողին, հալածել է իր համար առաջին գրադարան բացողին, հալածել է իր քաղաքի առողջապահութեան պայմանների բարւոքողին, հալածել է Աստուծոյ խօսքը եկեղեցու բեմից քարոզողին, հալածել է իր ուսուցիչներին, իր խմբագիրներին, իր գրագէտներին։ Այսօր Շուշիում տիրում են նոյն խառնվութիւնները, ինչ որ տիրում էին տասնեակ տարիներ սրանից առաջ... Ոչ մի յառաջադիմութիւն, ոչ մի հետք խաղաղասիրութեան և ուսումնասիրութեան, այլ շարունակ կռիւ, շարունակ ծեծ, գանգատներ, անստորագիր նամակներ, ինտրիգներ։ Այսօր Շուշուայ թեմական դպրանոցի տեսչի և ուսուցչական խմբի գլխին կախուած է քըննութեան դամոկլեան սուրը և մեզ հասած լուրերից երեւում է որ նըժարը ծանրանում է տեսչի և ուսուցչական խմբի արձակման կողմը։

Մենք կողմնակից չենք Շուշուայ դպրանոցի այժմեան ուսուցչական խմբի, այդ բաւական չէ՝ մենք հաստատ համոզուած ենք հայր Կիւրեղ Սրապեանի անկողմնապահ լինելում, սակայն կարծում ենք որ Շուշուայ մթնոլորտը աւելի մեղաւոր է դըպրոցի խառնվութիւնների մէջ, քան ներկայ ուսուցչական խումբը, որի գլխին է կոտրվում «կուժն ու կուլէն»։

Մենք բողոքում ենք այդպիսի կարգ ու կանոնի դէմ, այդպիսի պայմանների դէմ, որի մէջ դրուած են հայ ուսուցիչները, որոնք շարունակ զոհ են դնում շուշեցիների ինտրիգներին։ Շուշիի առհասարակ հասարակական գործերի և մասնաւորապէս դպրանոցի անցեալն աչքի առաջ ունենալով մենք տրամադիր ենք հաւատալու որ տեսուչը և ուսուցչական խումբը թէև մեղաւոր էլ լինեն, ներկայ դէպքում, ինչպէս և միշտ, զոհվում են տեղական հոգաբարձութեան և Առաջնորդի մէջ տիրող դժտութեանց։

Դպրանոցի դրութիւնը բարւոքելու համար անպատճառ անհրաժեշտ չէ տարէնը մէկ տեսուչ և 20 ուսուցիչ արձակել և նորերը հրաւիրել, այդ միանգամայն կործանիչ է դպրոցի համար։ Քննութեան նպատակը պիտի լինի ոչ անպատճառ մի ամբողջ խումբ արձակել, մանաւանդ որ միևնոյն է՝ այդ արձակուած խումբը, որ վատ է համարվում Շուշիում, կարող է լաւ համարուել մի այլ հայկական դպրոցում. քննութեան նպատակը պիտի լինի բանալ դժտութեանց խըռնական արմատական պատճառները և նրանց ոչնչացնել. պարզել հասարակութեան թէ ինչի այս կամ այն ուսուցիչը պատժվում է և հեռացվում է դպրոցից, թէ ինչ միջոցներ են ձեռք առնվում այդ դժտութեանց կրկնուելու դէմ, և այլն և այլն։ Չէ՞ որ գլխաւորապէս պայմանները, դպրոցների դրութեան անորոշութիւնը, տեսուչների և հոգաբարձութեանց իրաւանց չափի անորոշութիւնն են դժտութեանց գլխաւոր պատճառները։

Եթէ չունինք որոշ ծրագիր դպրանոցի համար, եթէ չունինք որոշ, խստիւ սահմանած օրինական կանոնադրութիւն, իրաւունք էլ չունինք մեղադրել տեսչին կամ ուսուցիչներին, երբ նրանք իրենց խելքը կտրածի պէս են վարում դպրոցի մանկավարժական ուսումնական և կրթական գործերը։ Այդ մէկ։

Երկրորդ՝ ամբոխի դատին չէ կարելի յանձնել դպրոցը, ուսման տաճարը իր ուսուցչական խմբով. մենք մեր թշնամիներին անգամ չենք մատնել ամբոխի դատաստանին, որ տգէտ է և գործիք ինտրիգանների ձեռում։ Այդ պատճառով մենք յոյս ունինք, որ թէ Արժանապատիւ Հայր Կիւրեղ Սրապեանը, թէ Շուշեցի ողջամիտ քաղաքացիք կ'աշխատեն չըխառնել դպրոցական գործին այն միջտական անտեղի և սուտ բամբասանքները, կանացի մեղադրանքները, որոնք դրուել են անխտիր Շուշի ոտ կոխող բոլոր տեսուչների և ուսուցիչների վրայ։

Թող ի նկատի ունենան Շուշուայ դպրոցի գործի քննիչները, որ «աւելի լաւ է տասը մեղաւոր արդարացնել, քան մի անմեղ մեղադրել»։

Մենք չենք գաղտնի Շուշուայ թեմական դպրանոցի և նրա ուսուցչական խմբի վիճակին հետաքրքրուելուց, իսկ քննութիւնից յետոյ կրկին կը յայտնենք մեր կարծիքը. բայց այժմ վերջացնելով ներկայ տողերը, պարտք ենք համարում դիմել շուշեցիներին երկու խօսքով... «խնայեցէք ձեր դպրոցները և յարգեցէք ձեր ուսուցիչներին»։

Շուշեցի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Վարդավառից յետոյ Վեհափառ Հայրապետն ուղևորուելու է դէպի Բիւրական»։

* * *

Երկուշաբթի, ամսոյս 25 ին, Նորին Բարձրութեանց մեծ իշխանուհի Կսենիա Ալեքսանդրովնայի ու մեծ իշխան Ալեքսանդր Միխայլովիչի պսակադրութեան առիթով Թիֆլիսի պետական և հասարակական շատ հաստատութիւններում պարապմունքներ չկային։ Երեկոյեան քաղաքը և Ալեքսանդրեան այգին լուսաւորուած էր։ Այգում նուագում էր զինուորական երաժշտութիւնը։

* * *

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մշակի» 81 №-ում հաղորդած այն լուրը, որ իբրև թէ Երևանի թեմ. դպրանոցի հոգաբարձութիւնը տեսչութեան համար առաջարկութիւն է արել պ. պ. Լևոն Մանուէլեանցին և Ղազարոս Աղայեանցին, միանգամայն սուտ է. ստոյգն այն է, որ դոցա և մի քանի ուրիշների հետ բանակցութիւն է արել յիշուած հոգաբարձութեան մի խամախոհ անդամ և ոչ թէ հոգաբարձութիւնը։ Իսկ հոգաբարձութեան կողմից հրաւէր է ստացել Մոսկվայի համալսարանի լեզուագիտական բաժնի կանդիդատ պ. Յովհաննէս Յովհաննիսեանը, որ բացէ ի բաց մերժել է ընդունել այդ պաշտօնը։ Երևանի դպրոցի հոգաբարձութեանը՝ տեսչութեան պաշտօն ստանալու համար խնդիրք են մատուցել նաև Ստեփ. Մալխասեանը և Լևոն Սարգսեանը։

* * *

Ճանապարհների հաղորդակցութեան նախարարութիւնն առաջարկել է այս տարի ճանապարհների հաղորդակցութեան ճեմարանն աւարտող բոլոր ինժեներներին համաձայնել ծառայել նոր շինուող Սիբիրեան երկաթուղու վրայ։ Ինժեներները մերժել են։ Այժմ, ինչպէս հաղորդում է «Նովօստի» լրագիրը, նախարարութիւնը՝ կարօտութիւն ունենալով ինժեներների, մտադիր է ընդունել ճանապարհների հաղորդակցութեան ճեմարանում մի տարի ժամանակով 60 հոգի տեխնօլօգիքական ինստիտուտն աւարտողներից։ Դրանք ճեմարանում պիտի մնան մի տարի, որից յետոյ կըստանան ճանապարհների հաղորդակցութեան ինժեների կոչումն, պարտաւորուած լինելով ծառայել Սիբիրի երկաթուղու վրայ ոչ պակաս քան երեք տարի։

* * *

Մինչև այժմ նաւթային արդիւնաբերողների նոր միութիւնը (սօյուզ) ոչ մի գործարանատէրի ոչինչ չէ վճարել նրանից գնած կէրօսինի համար. այժմ, ինչպէս լսել է «Կասպիյ» լրագիրը, գործարանատէրերը շուտով կը ստանան «Միութեան». միջոցով Բագու տարուած բոլոր կէրօսինի արժէքը՝ փութին առ այժմ հաշուելով 5 կոպէկ։

* * *

Տարրական-ժողովրդական դպրոցների, եկեղեցական-ծխական ուսումնարանների մէջ երկու սեռի աշակերտների թիւը հասնում է ամբողջ Ռուսաստանում երկու միլիոնի։ Դրանց կրթող-ուսուցանող ուսուցիչների և վարժուհիների թիւն է 60,000։ Վերջիններիս նիւթական դրութիւնը շատ աննախանձելի է, ժողովրդական դպրոցի տարեկան վարձատրութեան միջին թիւը կազմում է 191 րուբլի. Պետերբուրգի նահանգում այդ գումարը հասնում է 222-ի, իսկ հիւսիսային և հարաւ. արևմտեան նահանգներում մինչև 88 ր.։ Կարելի է ասել համարձակ, որ ձրի ծառայող «դուքնի աշակերտներն» աւելի են ստանում։

* * *

ՄԵԾ ՇԷՆ գիւղից (Ջիվանշիրի գաւառ) մեզ գրում են. «Կը զարմանաք որ ասեմ թէ ոչ միայն Մեծ-շէնը, Կուսապատը, այլ և շատ շուշեցիներ և գանձակեցիներ, որոնք այդ գիւղերի հետ հաղորդակցութիւն ունէին մօտ տասն և աւելի տարիներ սրանից առաջ, գործ էին ածում «Մարաղու չայ» անուանուած բոյսը, որ իր համով, հոտով, յատկութեամբ շատ նման է չինական չային։ Այդ բոյսը ահագին առատութեամբ բուսնում էր Մարաղա գիւղի շրջակայքում և տեղացիք նրան ժողովում, չորացնում և ծախում էին։ Մինչև այժմ էլ այդ նոյն բոյսը կայ, բայց այլ ևս նոյն խնամքը և յարգանքը չէ վայելում տեղացիներից, որոնք զբաղուած են չալթուկի մշակութեամբ։ Շատ ցանկալի կը լինէր որ ձեռնհաս անձինք ուսումնասիրէին այդ բոյսը և նրա մշակութիւնը, գուցէ նա կարողանայ արդիւնաբերութեան մի նոր աղբիւր դառնալ»։

* * *

ԳԻՐՔ գիւղից մեզ գրում են.—Աւազակային խումբը, որի մասին լաւ յայտնի է արդէն «Արձագանքի» ընթերցողներին, այժմ նոր սիստեմ է ձեռք առել Շամախու գաւառի գիւղացիներին կողոպտելու համար։ Նրանք մի քանի գիւղեր՝ հովիւների միջոցով նամակներ են ուղարկում, որոնց մէջ պահանջում են որոշ գումար ժողովել և դնել դաշտում որոշ տեղը, որ և անուանում են նամակում։

* * *

Յուլիսի 25 ին, օր ցերեկով, Թիֆլիսի բազմամարդ փողոցներից մէկի վրայ, փոստի և հեռագրատան առաջ տեղի ունեցաւ մի յանդուգն կողոպտման փորձ։ Փոստատան ծառայող պ. Պիցխելաուրին տանում էր արքունի գանձարանին յանձնելու կայաբանում ժողովուած 2631 րուբլին։ Բայց Պիցխելաուրին հենց փոստատնից դուրս եկաւ թէ չէ, իսկոյն նրա վրայ յարձակուեց մի չուխաւոր մարդ, խլեց ձեռից փողի կապոցը և սկսեց փախչել։ Գողի ետևից ընկան Պիցխելաուրին իր երկու ընկերներով, մի ոստիկան և մի քանի մարդիկ. մի քանի անգամ բռնեցին նրան, բայց նա շարունակ դուրս էր պըրծնում և փախչում. վերջապէս մի կինտոյի յաջողուեց բռնել գողին և գլորել գետին։ Գողը բանտարկուած է։

* * *

Յուլիսի 23-ին, գիշերուան ժամը երեքին, Բագուից Թիֆլիզ եկող երկաթուղու փոստային մարդատար գնացքը № 4 Կարասու կայարանում 661-երորդ վերստի վրայ ընդհարուել է Թիֆլիզից Բագու գնացող ապրանքատար № 41 գնացքի հետ։ Ընդհարումն այնքան սաստիկ էր, որ երկու շոգեկառքերն էլ վնասուել են։ Երբ սարսափելի ընդհարումը պատահեց, ճանապարհորդներն ամենքը քնած էին, նրանք պառկած տեղերից վայր թափուեցին յատակի վրայ և գրեթէ ամենքը վնասուեցին։ Ամենից աւելի վնասուել են № 4 գնացքի աւագ կոնդուկտոր Մ. Պոլտաձէն, փոստն ուղեկցող աստիճանաւոր Նազարով, նամակատար Կոկաշվիլին և ուրիշները։ Վնասուածների վէրքերն այնքան ծանր էին, որ անհրաժեշտ եղաւ նրանց բժշկական օգնութիւն հասցնել։ Միմիայն կոնդուկտոր Կալեականի սառնարիւնութեան շնորհիւ՝ որ ժամանակին կանգնեցրեց գնացքը—ճանապարհորդներն ազատուեցին աւելի ծանր վտանգից։

* * *

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ հաղորդում են մեզ որ դերասան պ. Ս. Աբրահամեանը թատերասէրների մասնակցութեամբ յուլիսի 21 ին ներկայացրել է Գ. Սունդուկեանցի «Պէպօն» և մեծ յաջողութիւն է ունեցել. հասոյթը 200 րուբլուց անցել է։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր.

Դեռ երկար չէ անցել այն օրից, որ Բագուի տեղական «Կասպի» լրագիրը Բագ. փոխադարձ վարկի ընկերութեան ընդհանուր ժողովում ապացուցեց, թէ որքան գին ու արժէք ունին իր թերթում հիւրասիրութիւն գտած նոյն հաստատութեան դէմ մի պաշտօնաթող ծառայողի ուռուցիկ պատմութիւնները իւր չհասկացած «սխալ ու խառն» երևակայական «հաշիւներով», իսկ այժմ էլ, ինչպէս երևում է, նոյն լրագիրը իւր անուղղակի ակնարկներով չեղած և տեղի չունեցած աննպաստ լուրեր է սկսում հրատարակել։ Այդ նոյն լուրերից երկուսը հիւրասիրութիւն գտած լինելով «Արձագանքի» վերջին 82 համարում, պարտք ենք համարում սոյն երկտողովս յայտնել որ՝

Նախ՝ ժամանակից մի ամիս առաջ Նոտարի մօտ բողոքուած մուրհակի դէպքը բնաւին տեղի չէ ունեցած սոյն հաստատութեան մէջ. Թէև Іюнь և Іюль ամսների համանման գրութիւնը կարող են չփոթեցնել և շատերին։

Երկրորդ՝ այն ակնարկութիւնը, թէ մուրհակները առանց գանձուելու 40 – 50 օրով մնում են ընկերութեան պորտֆելում՝ դա ևս ճիշտ չէ. Ճիշտն այն է, որ իւրաքանչիւր շաբաթ, գանձման յատուկ օրը (բացի մէկ անդամից) եկել են սովորական կարգով մուրհակների հերթական գանձումն՝ հարիւրից պակաս և աւելի թուով. Իսկ եթէ ամսով և աւելի ուշացող մուրհակներ եղած են՝ այդպիսիք պարտաւոր են իրանց կանխածել բանաւորութեան, կամ նրանցից առաջ բերած մուրհակների մեծ քանակութեան։

Մեծապատիւ Խմբագիր, ի դիմաց Բագուի փոխադարձ վարկի վարչութեան խնդրում ենք, ձեր լրագրի հետևեալ համարում զետեղել այս երկտող բացատրութիւնը։

Նախագահ վարչութեան՝
Գ. Այվազեանց։

23-ն յուլիսի, 1894 թ.
Բագու.

Տպագրելով Բագուայ փոխադարձ վարկի ընկերութեան յարգելի նախագահ պ. Գրիգոր Այվազեանի այս նամակը, հարկ ենք համարում առ այժմ հետևեալ նկատողութիւններն անել.

1) Մենք չենք հասկանում նախ թէ ինչո՞ւ է պ. Այվազեանը հարկ համարել իբրև թէ «անճիշդ» հաղորդածների հերքումը «Արձագանքին» ուղարկել և միանգամայն անպատասխան թողնել «Կասպի» լրագրի հրատարակած «աննպաստ լուրերը» պ. Այվազեանի տեսչութեան յանձնած հաստատութեան մասին։ Չէ՞ որ Բագուայ փոխադարձ վարկի ընկերութիւնը» և «Կասպի» լրագիրը Բագւում են գտնվում, իսկ «Արձագանքը» Թիֆլիզում։ Կամ գուցէ պ. Այվազեանն արհամարհում է «Կասպիին» և առանձին պատիւ արժանացնում մեզ... այս դէպքում ի հարկէ մենք շատ «շողոքորթուած ենք»։

2) Ինչ վերաբերում է պ. Այվազեանի ա'կնարկներից «պաշտօնաթող ծառայողի» մասին, վստահանում ենք նկատել որ երբեմն աւելի մեծ քաղաքացիական քաջութիւն է այս կամ այն պաշտօնը թողնել, քան նոր պաշտօն ընդունել։

3) Մեր համեստ կարծիքով այն պաշտօնական հերքումները, որ պ. Այվազեանն ուղղում է լրագիրներին, պէտք է նախ քան բանկի խորհրդի ցենզուրայից անցնեն։ Այն ժամանակ գուցէ մամուլի մէջ լոյս չտեսնէր այդ բանկի վարչութեան նախագահի խոստովանութիւնը, որ կան կոմիտետից ընդունած մուրհակներ, որոնք չեն գանձվում փողի պակասութեան պատճառով։ Այս խոստովանութիւնը պ. Այվազեանն անում է իր նամակի հետևեալ խօսքերով «Իսկ եթէ ամսով և աւելի ուշացող մուրհակներ եղած են՝ այսպիսիք պարտաւոր են նրանցից առաջ բերած մուրհակների մեծ քանակութեան»։ Ուրեմն՝ «ով չուստ, նա կուշտ», պ. Այվազեան։

Ծ. Խ.

* * *

Իւրեվի (Նախկին Դորպատ) համալսարանում առաջիկայ ուսումնական տարուց պիտի բացուի յունադաւան եկեղեցի, որ պիտի լինի համալսարանի երրորդ յարկում, ուր մինչև այժմ գտնվում էին [illegible]։ Առանձնասենեակները բաղկացած էին երկու մեծ դահլիճներից. այժմ դրանցից մէկը պիտի շինուի սեղան, իսկ միւսն աղօթարան, որ կարող է տեղաւորել 300 աղօթողներ։

* * *

Ամսոյս 23-ին Թիֆլիզ է ժամանել Ախենի պօլիտեխնիկական ճեմարանի պրօֆեսոր Անդրէաս Արծրունին, «Մշակի» հանգուցեալ խմբագրի եղբայրը։ Յարգելի պրօֆեսորը, ինչպէս լսում ենք, մտադիր է Երևանեան նահանգը ուղևորուել՝ գէօլօգիական հետազօտութիւններ անելու այնտեղ։

* * *

Որովհետև դեկտեմբերի I-ից երկաթուղու գծերի վրայ մարդատար գնացքների համար պիտի մտցնուի

էժանացրած նոր տարիֆը, այդ առիթով վերջին օրերս նիստ է կայացել նախարարութեան մէջ, ուր խորհրդակցել են թէ ինչ միջոցներ ձեռք առնեն երկաթուղու ծախքերը պակասեցնելու համար, որովհետև պակասում է և նրա եկամուտը։ Խորհուրդը մշակել է հետևեալ նախագիծը.—Առաջին կարգի վագոններ դնել միայն այն ճանապարհների վրայ, ուր մեծ շարժումն կայ և միևնոյն ժամանակ տպագրած յայտարարութեանց մէջ ճիշտ և որոշ յայտնել թէ որ գնացքների մէջ կը լինի I կարգի վագոններ. արագընթաց գնացքները կազմել միայն I և II կարգի վագոններից՝ ննջարանի և չխողների բաժանմունքով։ Պակասացնել կոնդուկտորների թիւը, գոլորշով տաքացնելու փոխարէն վագոնները տաքացնել սովորական վառարաններով և այլն։

***

ՊԻՍՏԻԳՕՐՍԿԻՑ մեզ գրում են.

«Ամսոյս 18 ին տեղի ունեցաւ մի հայերէն ներկայացումն, կառավարութեամբ դերասանուհի օր. Վարդիթերի և դերասան Յովհաննիսեանի, և սիրողների մասնակցութեամբ։ Սա առաջին հայերէն ներկայացումն էր, որ տրուեց հանքային ջրերում և բաւական յաջող անցաւ։ Խաղացին «Սուտ ճգնաւոր» և «Ո՜չ քիչ օլին» վօդըվիլները։ Պ. Յովհաննիսեանը սուտ ճգնաւորի և Աւետիքի դերերը յաջող կերպով կատարեց, և վարձատրուեց բուռն ծափահարութիւններով։ Սորանից յետոյ օր. Վարդիթերը հիանալի կերպով կարդաց «Օրլեանի կոյսից» Յովհաննէսի երազը և ուրիշ ոտանաւորներ՝ հայ բանաստեղծներից և արժանացաւ երկար ծափահարութիւնների՝ քանիցս բեմ կանչուելով։ Ներկայացումը վերջացաւ կենդանի պատկերներով, վերցրած Տաճկահայոց կեանքից։ Թատրոնը համարեա լիքն էր։ Ուղիղ 12 ժամին հանդիսականները ցրուեցան ուրախ տրամադրութեան ներքոյ։ Զուտ արդիւնք մնաց 177 ր. 57 կ.։ Արդիւնքի կէսը յատկացրած է տեղոյս ծխական ուսումնարանին։

***

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Պատուական թերթիդ № 58 ում պատիւ էի ունեցել հաղորդելու, որ պ. Ասքանազ Տէր-Սիմէօնեանին իր հրատարակելիք «Գարիբալդի կամ Ազատութիւն հայրենեաց» գրքի համար 25 օրինակի բաժանորդագրութեամբ եմ ուղարկել, բայց դեռ գրքեր չեմ ստացել։ Այդ մասին լրագրում հաղորդածս օրից անցել է երկու ամիս, բայց դեռ ոչ գրքերն եմ ստացել, ոչ էլ պարոնից պատասխան ունիմ ստացած։ Բաժանորդների պահանջին բաւարարութիւն տուած լինելու համար՝ այսու խնդրում եմ պ. Ասքանազ Տէր Սիմէօնեանին մի երկտողով պատասխանելու՝ «Գարիբալդի» գիրքը լոյս տեսնէ՞լ է թէ ոչ, և թէ երբ և լինէ լոյս տեսնելու է։ Զարմանալի է իսկապէս մեր մի կարգ հրատարակիչների բռնած ընթացքը բաժանորդագրութեամբ գրքեր հրատարակելու գործում։ Ի լուր աշխարհի յայտարարվում է, թէ այս ինչ անունով գիրքը մամուլին է յանձնուած, մօտ օրերս լոյս է տեսնելու, բաժանորդաթերթեր են ցրւում, բաժանորդավճարները մտնում են հրատարակիչների գրպանները, իսկ գիրքը լոյս չի տեսնում տարիներով։ Հրատարակիչները հանգիստ տեղները նստած չեն էլ ուզում մտածում ու բարեհաճում մի երկու խօսքով բաժանորդներին պարզելու գրքի ժամանակին լոյս չը տեսնելու պատճառները։ Գրականական խաչագողութիւն չէ սա՝ բաս ինչ է։

Ս. Տէր-Կարապետեան։

Ե Ջ Դ

Երկուշաբթի օրը՝ Մեռելոց լինելու պատճառով տեղւոյս տպարանները գոց էին, ուստի «Արձագանքի» ներկայ համարը լոյս է տեսնում կէս մեծութեամբ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** Ռուսաց պետական գիւղական դպրոցների ուսուցիչներից մէկը «Նեդելիա» շաբաթաթերթում տպագրել է իր նկատողութիւնները գիւղացոց յարաբերութեանց մասին դէպի ուսումնարանը։ Յօդուածի հեղինակ պ. Երմօլայեւն ասում է, որ նա շատ դէպքեր է տեսել, որոնք ապացուցանում են թէ գիւղացին շատ քիչ է համակրում ուսումնարանին, բայց պնդում է որ այդ անհամակրութիւնը ոչ թէ տգիտութիւնից, ինչպէս առհասարակ ասում են ամենքը, այլ ուրիշ աւելի հիմնական պատճառներից է առաջ գալիս.

«Եթէ գիւղացին ուսում չսիրէր—ասում է պ. Երմօլայեվը—նա իր որդուն դպրոց չեղած տեղը չէր ուղարկի տիրացուի կամ քահանայի մօտ սովորելու»։

Յօդուածի հեղինակը գիւղացու սառնութեան պատճառները գտնում է նրա մէջ, որ դպրոցներում մի քանի առարկաների դասաւանդութեան ձևն աննպատակայարմար է և անկանոն. այդ առարկաներն են քերականութիւնը և թուաբանութիւնը.

«Աշակերտներին—ասում է հեղինակը—տանջում են թելադրութեամբ և վերացական թուերի հաշուարարութեամբ. մինչդեռ խուսափում են այդ առարկաները գիւղական կեանքի պէտքերին օգտակար կերպով յարմարացնելուց։ Դպրոցաւարտ աշակերտները գոնէ փոքր ինչ շնորքին հասկանալի նամակ չեն կարողանում գրել, չեն կարողանում ամենահասարակ անհրաժեշտ տնային հաշիւներ անել, որովհետև ուսումնարանների ծրագիրները նրանցից բոլորովին այլ գիտութիւններ են պահանջել։

«Ահա թէ ինչ է պատճառն - ասում է յօդուածագիրը—որ գիւղացին վնասակար և անպէտք է համարում ոչ միայն թուաբանութիւնը և քերականութիւնը, այլ և նրանց հաղորդող դպրոցը»։

*** Ղզլարը յայտնի է իր գինու առատութեամբ, որ նրա ազգաբնակութեան բարօրութեան գլխաւոր և գրեթէ միակ աղբիւրն է։ Կովկասեան գինեգործները սակաւ են ծանօթ Ղզլարու գինեգործութեանը, որովհետև վերջինս իր արդիւնաբերութիւնը գրեթէ բացառապէս ամբողջովին Ռուսաստան է ուղարկում վաճառելու։ «Ռուսկիյա Վեդոմօստի» լրագրում Ղզլարից շատ հետաքրքրական տեղեկութիւններ են տպագրուած տեղական գինեգործութեան վերաբերեալ. այդ տեղեկութիւնների մէջ ցոյց է տուած թէ ինչ յարաբերութիւն ունեն Ղզլարու բնական արդիւնաբերութեան հետ զանազան «եղբարք Ջմիեվներ» և այլ արդիւնաբերողներ, որոնք առներով Ղզլարու անարատ գինիները, նրանից կեղծում են զանազան խմիչքներ, մադերներ և այլն։

«Մոսկվան և Նիժնիյ Նովգորոդը—ասում է «Ռուսկ. Վեդ.» թղթակիցը—առում են ահագին քանակութեամբ մեր գինիները, նրանցից զանազան խմիչքներ, լաֆիտներ և մադերներ կեղծելու համար։ Գինիների գերազանց մաքրութիւնը և գոյնը և դրա հետ միասին անհամեմատ էժանագները Մոսկվայի գործարանատէրների համար անվերջ դանձի դուռն են բացել։ Այսպիսի պայմաններում կեղծելու հնարաւորութիւնը դիւրանում է և ամենահասարակ կերպարանք է ստանում, այն է՝—հասարակ ջուր խառնելով, մի քիչ սպիրտ լցնելով ամրութեան համար և մի քիչ կօնեակ կամ իսկական պօրտվէյն, մեր գինիներից այնպիսի խմիչքներ են շինում, որոնց համը տեսնելուս բթանում են եւրոպական ամեն տեսակ խմիչքների ամենալաւ ճանաչողները։ Նոր «մուշտարու» պահանջին յարմարուելով տեղական գինեգործները սկսում են էժանագին գինու արտադրութիւնը սաստկացնել, ընտրելով այն խաղողները, որոնք աւելի ջրալի են, բացի դրանից մամուլի տակ ճնշում են խաղողի կեղևը որ նրա նիւթով գինուն թէ աւելի մուգ գոյն տան և թէ «տտպութիւն։» Այն ինչ որ այժմ գալիս է Ռուսաստան «Կովկասեան բնական գինի» անունով և որ վերջին տարիներս ահագին ծաւալ է ստացել, բովանդակում է իր մէջ աւելի ջուր, շաքար, խինդեղնի հիւթ, ալքոհօլ, քան իսկական գինու հիւթ։»

Յօդուածի հեղինակը պնդում է, որ գործածողների ճաշակն այնքան փճացել է, որ եթէ բնական անարատ գինի բերելու լինին, նրանք չեն կարող ճանաչել և կը նախապատուեն կեղծածը։ Խօսելով Նոր նախագծուած հարկերի մասին, որին ուզում են ենթարկել գինին, յօդուածագիրը կարծում է, որ այդ հարկը ոչ միայն չի օգնել գինին կեղծիքից պահպանելու, այլ ընդհակառակն՝

«Անկասկած կառաջացնէ մի նոր արտադրութիւն, որ միայն նման կը լինի խաղողի գինու, բայց որ իսկապէս կը լինի թթու «կվաս» կամ համանման մի այլ խմիչք»։

*** «Նովոյէ Օբոզրենիէն» գրական «ազնուութեան» մի «ազատամիտ» քայլ է արել իր վերջին համարում, որից ոստիկանական թերթերն անգամ կը կարմրէին։ Յանկանալով հերքել նոյն իսկ իրենց հաղորդած լուրը, երբ Թումանովները հետևեալ մարգարտաշար պաշտպանողական ճառն են տպագրում՝

«Մեր լրագրի («Նով. Օբոզր.») № 3630 ի մէջ հաղորդուած էր, թէ արդարադատութեան նախարարութեան աստիճանաւոր պ. Կրիվցկին զբաղուած է Թիֆլիզի նահանգական դատարանի մէջ քննուող գործերի ուսումնասիրութեամբ։ Մեր ժողոված տեղեկութիւններից երեւում է, որ այդ լուրն անհիմն է և մամուլի մէջ երևացել է միայն շնորհիւ այն հանգամանքի, որ նրան հաղորդողն է նոյն իսկ այն հաստատութեան մէջ ծառայողը։

Աչքը լոյս «Նով. Օբոզր.» աշխատակիցների. բաւական էժան է գնահատվում նրանց կաշին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.—Ֆրանսիական պալատի վերջին նիստը, ուր քննվում էր անիշխանականների դէմ օրինաց նախագիծը, շատ հետաքրքրական էր։ Պարլամենտի ամենանշանաւոր և տաղանդաւոր ճարտասաններից մէկը յայտնի պատգամաւոր Փոբէս հրատապ ճառ արտասանեց նախագծի մի քանի կէտերի դէմ և այնքան համոզիչ որ քիչ էր մնում որ մեծամասնութեան ձայները գրաւէ. Նրա առաջարկութիւնը մերժուեց ընդամենը 6 ձայների առաւելութեամբ. պակաս նշանաւոր չէր և Պօլ Դէշանէլի ճառը, որ յիշեցնում էր ֆրանսիական տերրորի ժամանակ Լուիվէի արտասանած խօսքերը՝ «Ռոբէսպիէր, ես քեզ մեղադրում եմ»։ Բայց երբ Դէշանէլից յետոյ բեմ բարձրացաւ Ռուվիէն, առաջինների ճառերը գունատուեցին և ոչնչացան նրա պատմական փաստերի և քաղաքացիական ազնուութեամբ շնչող խօսքերի առաջ.—«Պ. Փոբէսը Գամբետայի անունը տուաւ,— ասաց Ռուվիէն,—բայց Գամբետան ինքը փորձել է բամբասանքի դառնութիւնը, նրան մեղադրում էին շահախնդրութեան, ասիական շռայլութեան մէջ, և ասում էին իբր թէ հայրենիքի միլլիոնները ի չարն է գործ դնում։ Յետոյ Ժիւլ Ֆէրրիի հերթն եկաւ, նրան ևս վիրաւորեցին և բամբասեցին. Նրա թշնամիների երևակայութեան մէջ Տօնկինը և Թունիսը առևտրական ձեռնարկութեան շուկաներ երևացին (Ծափահարութիւններ) և ահա մի մարդ այդ բոլորը կարդաց և ատրճանակով գնուած վիրաւորեց նրան...Յետոյ հասաւ համեստ քաղաքական գործիչների հերթը։ Մենք ևս ճաշակեցինք բամբասանքի և մատնութեան համը, մեր գլխի վրայով նոյնպէս անցաւ փոթորիկը, բայց ես չծռեցի և չեմ ծռի իմ գլուխս» (աղմկալի ուրախ ծափահարութիւններ)։

ԻՏԱԼԻԱ.—Իտալական արդարադատութիւնը մի անսպասելի քայլ արաւ։ Հռոմի բանկի յայտնի հերոսները ամենքն առանց բացառութեան արդարացրած են։

Հռոմի բանկի գործը նոյն հռչակն էր ստացել և մտքերի նոյն յուզումն էր պատճառել Իտալիայում, ինչ որ «Պանամայի» գործը Ֆրանսիայում։

Արդարացել է ոչ միայն բանկի նախկին կառավարիչ Տանլոնգօն, որ ազատ ու յայտնի շպրտում էր բանկի գումարները քաղաքական նպատակներով և այդ գումարների օգնով փոխում էր մինչև անգամ նախարարներին, արդարացած է նոյն իսկ Հռոմի նախարարութեան առևտրական բաժնի դիրեկտորը, որ չէր մերժում թէ ճշմարիտ է, ինքը կաշառներ է ստացել Հռոմի բանկի վարչութիւնից։ Դուրս է գալիս որ այն մարդիկ, որոնք ազատ համարձակ ստուեր են ձգում նոյն իսկ իտալական կառավարութեան վրայ խոստովանելով իրենց կաշառառութիւնը և կաշառակերութիւնը, նրանց արդարացնում է իտալական դատարանը, որի ներկայացուցիչները մինչև այժմ օրինակելի են համարուել արդարադատութեան շրջաններում։ Գործին, ինչպէս երևում է, այնպիսի ընթացք են տուել որ նա վերջանայ այն ժամանակ, երբ պատգամաւորների պալատը փակ է, բայց իտալական և առհասարակ եւրոպական թերթերից շատերը յոյս են յայտնում որ պալատի բացումից յետոյ այդ խնդիրը կրկին կը վերանորոգուի։

ԿՕՐԷԱ.—«Politische Correspondenz» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է թէ՝ «Ռուսաստանն ամեն ջանք գործ կը դնի Չինաստանի և Կորէայի մէջ ծագած պատերազմը դադարեցնելու համար։ Յամենայն դէպս Ռուսաստանը թոյլ չի տալ որ Կորէան զրկուի իր անկախութիւնից։ Նոյնպէս ռուսաց կառավարութիւնը չէ կարող համբերել որ որևէ եւրոպական պետութիւն խառնուի Կորէայի գործերին»։

Լրագրների լուրերին նայելով Լօնդօնում ընդհանուր կարծիք է տիրում թէ վերջ ի վերջոյ Չինաստանը կը յաղթէ։ Այդ կարծիքը հիմնուած է նրա վրայ թէ Չինաստանն ահագին հարուստ միջոցներ ունի։ Չինական ֆինանսների գլուխ է կանգնած յայտնի դրամագէտ Ռօբէրդ Գարտ. Չինաստանը Լի-Հունգ-Չանգի պէս նշանաւոր գեներալ ունի։ «Daily News»-ի ասելով միայն Տեան-Չին նահանգը 100,000 զինուոր կարող է տալ։

Ճափոնական զօրքի գլխաւոր զօրավար է նշանակուած միկադօյի ազգական իշխանազն Արիսուգավան, որ 1837 թուին զսպեց Ճափոնիայի հարաւային գաւառներում ծագած ապստամբութիւնը։ Իշխանազն Արիսուգավան մի քանի տարի սրանից առաջ եղել է Պետերբուրգում։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Յուլիսի 24-ից.

ՓԱՐԻԶ.—Հեռաւոր արևելքի նաւատորմին հրամայուած է Կորէայի նաւահանգստներում բնակուող ֆրանսիացիների շահերը պաշտպանել։

Չինաց դեսպանութիւնը Լօնդօնում պայման է կապում որ Չինաստան ուղարկուին մեծ քանակութեամբ զէնքեր և պատերազմական գործիքներ։

5 ժամուան կատաղի կռուից յետոյ ճափոնացիք գրաւեցին Ճանխայի տակ Ազանի մօտ գտնուած չինական ամրոցները։ 2800 չինացիներից ըսպանուած են մինչև 500, ճափոնացիներից սպանուել են 5 սպաներ և 70 զինուոր։ Չինացիք փախան Հանշօու. ճափոնացիք գրաւեցին չորս թնդանօթ ռումբերի ահագին քանակութեամբ և տիրեցին չինական գլխաւոր բանակին։

Յուլիսի 25-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մեծ իշխանուհի Կսէնիա Ալեքսանդրովնայի պսակադրութեան տօնը բարի գործով յաւերժացնելու նպատակով Բարձրագոյն հրամայուած է՝ հաստատել Նոր Եգական ուսումնարան-կլթարան, որի մէջ ծառայութեամբ ձեռք բերած կամ ժառանգական իրաւունքներով նիւթական միջոցներից զուրկ ազնուականների դուստրները կարողանան վերջացնել այդտեղ իրենց ուսման ընթացքը։ Նոր դպրոցը պիտի բացուի 350 կիսաորբերի համար. այդ թուից 175 աշակերտուհի անվճար կը լինին, իսկ մնացածները կը վճարեն տարեկան 250 ռուբլի։ Այդ նպատակի համար նուիրվում է կայսրուհի Մարիայի անուան հաստատութեանց իրաւունքի տակ գըտնուած պալատը, որ պատկանում էր հանգուցեալ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչ Աւագին, յատկացնելով պետական գանձարանից միանգամայն 400,000 ռուբ. պալատը դպրոցի յարմարեցնելու և 500,000 ռուբ. ապագայ դասատուների կենսաթոշակն ապահովելու համար. բացի դրանից իւրաքանչիւր տարի, դպրոցի ծախքերին յատկացնվում է 152,000 ռուբլի։ Ինստիտուտը կանուանուի «Կսէնևսկի ինստիտուտ»։

ՋԱՆԱԶԱՆ

Դերասանները Չինաստանում.—Դերասանների վրայ Չինաստանում նայում են այնպէս, ինչպէս Եւրոպայում գաւիճների վրայ։ Նոյն իսկ իշխանութեան ներկայացուցիչները դերասանների վրայ նայում են իբրև այնպիսի մարդոց վրայ, որոնք օրէնքից դուրս են. Կոնֆուցիուսի վարդապետութեամբ թատրոնը մի հաստատութիւն է, որ հիմնուած է ստի և կեղծիքի վրայ և ահա այդ վարդապետութեան շնորհիւ դերասանները Չինաստանում կախուած են իշխանաւորների կամայականութիւնից։ Եթէ անտրպրենիօրը—խմբապետը խմբի հետ թափառելիս մի քաղաք հասած ժամանակ չներկայանայ քաղաքագլխին և ընծաներով ու կաշառով չգրաւէ նրա ուշադրութիւնը, այն ժամանակ տեղական իշխանութիւնը բացէ ի բաց կարգելէ նրան ներկայացումներ տալ։ Մշտական թատրոններ գրեթէ չկան Չինաստանում։ Դերասաններին ռոճիկ է նշանակվում նրանց կատարած դերերի աստիճանին համաձայն։ Թագաւորների և կայսրների դերեր խաղացողներն ստանում են 400—500 մարկ ամսական, իսկ հասարակ մահկանացուների դերեր խաղացողները ամեն ներկայացման—մի մարկ։ Ներկայացումները տևում են 6—8 ժամ, և այդ ժամանակամիջոցում խաղում են մինչև տասներկու պիէս։ Բեմը շատ պարզ է. ոչ կուլիսներ ունի, ոչ վարագոյր. իսկ հագուստների վրայ առանձին ուշադրութիւն են դարձնում, որ շքեղ լինին։ Դերասանը բեմ դուրս գալով, առաջ ասում է իր անունն ու ազգանունը, պատմում է թէ ինչ դեր է կատարելու և թէ ինչ յարաբերութիւններ ունի միւս դերասանների հետ։ Պիէսները մեծաւ մասամբ փիլոզոֆային բովանդակութիւն ունին։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԲՈՒԺՈՂՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերարուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1—$1\frac{1}{2}$ ժ. ականջի կոկորդի և քթի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—$12\frac{1}{2}$—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—$7\frac{1}{2}$ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—$7\frac{1}{2}$ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխմի, արեան, կաթի և այլն.

Վճար 50 կ. համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին.

Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժիշկ Նաւասարդեան.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթեւեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին).

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Արծրունի — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը $10\frac{1}{2}$—12 ամեն. օր.

Կ. Ա. Ղոնէի—ներքին և երեխանց, ժ. $10\frac{1}{2}$—12 ամեն օր.

Գ. Գ. Գուլամիրեանց—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ա. Խանհոյեանց—կանանց ժ. 9—11 ամեն օր.

Ն. Գ. Կամսարեան—ներքին և երեխանց, ժամը 12-1 ամեն օր.

Ս. Ն. Լևէն—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 11—12 ամեն օր.

Մ. Ա. Միրզոեան—ներքին և վեներական, ժ. 12—1 (երկ. չոր. և շաբ. օր.).

Ա. Գ. Մուրդոյեան—ականջի, կոկորդի և քթի, ժ. 9—10 ամեն օր, բացի հինգշաբթի օրուանից.

Կին-բժ. Լ. Եռ. Մուխրանսկայա—կանանց, ժամը 11—12 ամեն օր.

Ե. Ա. Ռոզենբերգ—ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր.

Մ. Ա. Ռեհբերգեր—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր.

Գ. Ն. Սոֆիանեան—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 11—12 ամեն օր.

Գ. Ա. Թարխանեան — ներքին և խիրուրգ., ժ. 11—12 ամեն օր.

Կին-բժ. Ս. Ա. Ճէլիա—աչքի և կանանց, ժամը 11—12 ամեն օր.

Ատամնաբոյժ Ա. Օ. Օղէնէ—ատամների, ժամը 10—11 ամեն օր.

Կոնսուլտացիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը ժամը 9—1.

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
(Կախեթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ա. Խանհոյեան—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը.

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
(Բաննիա փօրօտա, տ. Էնֆիաճեանի)

Գ. Բ. Տէր-Աստուածատրեան—ժամը 11—12 ամեն օր.

Կին-բժ. Մ. Ա. Խանհոյեան—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը.

Ծանօթութիւն.—Չքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի.

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան.

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 9 և 50 րոպ.-ին երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 6 և 50 րոպէին երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 6 ժամին 50 րոպ. երեկոյեան.

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին 25 րոպ. երեկոյեան.

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9-ին երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 6 ին և 40 րոպէին երեկոյեան.

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը 8 ժամին 26 րոպէին երեկոյեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՐԲԱԶԱՐ ՔԱՂԱՔԻ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ հարկաւոր է մի ուսուցիչ Ռուսերէն և Հայոց լեզուի։ Ռոճիկը տարեկան 500 ռուբլի է։ Յանկացողը պէտք է դիմէ հետևեալ հասցէով Армянскъ (Таврической губ.) Попечителю Армянскаго Приходскаго Училища. (30—16)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑԻ հրատարակութիւնների պահեստը յունիսի 10—մինչև առաջիկայ սեպտեմբերի 10 յանձնուած է կենդրոնական գրավաճառանոցին, ուր պիտի դիմեն այդ գրքերի պէտք ունեցողները։ (10—4)